

IMRE MADÁCH

ՄԱՐԴՈՒՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

(Շար. տե'ս «Բազմավեպ», 1970, p. 4-8, էջ 141)

(ՏԵՍԻՆ Է.)

(Եւա, իբր իսարա, եւ Հեղինէ՝ անոր նաժիշտը, նշալով կը վագեն դէպի Ադամ՝ հետապնդուած քանի մը խաչակիրներէ, որոնք՝ սակայն՝ ատենին փախուստ կու տան):

Ե Ի Ա

(Մարելով)

Յզնէ՛, ասպետ:

ԱԴԱՄ

(Գրկելով զինքը)

Ազնի՛ւ տիկին, արթնցի՛ր:

Ապահով ես հոս. զեղանի աչքդ բա՛ց:

Ի՞նչ զիւթիչ է: Արդեօք ի՞նչ է պատահած:

ՀԵՂԻՆԷ

Մենք բնութիւնն ելած էինք վաղելու
 Մեր պարտէղի պուրակին մէջ ըստուերոտ,
 Անհոգ նստած զալարին վրայ հովասուն,
 Հետեւելով անոյշ երգին սոխակին.
 Վալրազ կրքով երկու աչքեր երբ յանկարծ
 Տեսանք փայլիլ թուփերուն մէջ ոստախիտ.
 Մենք սարսափած փախանք. իսկ մեր ետեւէն՝
 Չորս խաչակիր, գրկավորով եւ հեռուն,
 Կը հասնէին մեզի գրեթէ:

ԱԴԱՄ

Կը վարանիմ, ըղձամ՝ արդեօք արթննաս .
Գուցէ լքես, անըջային զերդ պատկեր :
Հողիանալ մարմին մ'այսքան ալ կրնամ :
Այսքան աղնիւ, ա'յսքան ըլլալ պաշտելի :

ԱՐՈՒՍԵԱԿ

Հողիացած մարմին : - Պատժել խկապէս
Ճակատադերն ալ աւելի չէր կրնար
Խենթ սիրահարն, քան դործադրել ինչ որ ան՝
Սիրելիին վրայ կը կուտէ խօլարար :

ԱԴԱՄ

Ինձ կը թըլի թէ ատենօք ճանչցայ քեզ,
Պատուանդանին առջեւ կեցած Աստուծոյ :

ԱՐՈՒՍԵԱԿ

Կ'աղաչեմ քեզ, որ զայն երբեք չմոռնաս .
Երկու հողուով սէրըդ որքան հաճելի՝
Նոյնքան անհամ, տաղտկալի է երրորդին :

ԱԴԱՄ

Ո՛հ, կը բանայ աչքերն, ահա՛... կը ժպտի :
Գոհութիւն քեզ, երկինք :

Ե Ի Ա

Դուն զիս փրկեցիր .
Ասպետ, քեզի ի՞նչպէս ըլլամ չնորհակալ :

ԱԴԱՄ

Խօսքըդ արդեօք վարձատրութիւն չէ՞ շքեղ :

ԱՐՈՒՍԵԱԿ

(Հեղինէիմ)

Վարձք մը վտիտ . այնքանի՞ն ալ չեմ արժան :

ՀԵՂԻՆԷ

Արդեօք քեզի ի՞նչ երախտիք կը պարտիմ :

ԱՐՈՒՍԵԱԿ

Ի՞նչ կը կարծես, ասպետը թէ վեհադարձ
Քե՞զ ալ փրկեց. ի՞նչ սընափառ մտածում:
Ասպետն եթէ օրիորդ մը կոյս աղատէ՝
Իր նաժիշտն ալ ասպարակիր արդարեւ:

ՀԵՂԻՆԷ

Ի՞նչ կը շահիմ: Երախտադէտ թէ ըլլամ՝
Հաւասար է ինձ հասնելիք վրտանդին,
Թէ ապերախտ նոյն կորուստն ինձ կը սպասէ:
Ձէին թուիր հալածողներն ալ տղեղ:

ԱԴԱՄ

Ո՞ւր կ'ուզես որ աղաջնորդեմ, հրամայէ՛:

Ե Ի Ա

Մ'եր առջեւն է կուսաստանին դուռն, ահա՛:

ԱԴԱՄ

Կուսասա՞ն. ո՛հ, յոյսը պիտի չըփակէ
Սրտիս առջեւ դուռը անոր, այնպէս չէ՞:
Նըչան մը տուր՝ որ կապեմ զայն խաչիս քով,
Երբ հրաւիրէ ասի կռուի ասպարէզ՝
Գեղեցկապոյն երազըս ան դարձրնէ.
Չձանձրանամ սպասել երկար տարիներ,
Եւ վարձքս ինծի ցոյց տայ անոնց աւարտին:

Ե Ի Ա

Ժապաւէնս ա՛ն:

ԱԴԱՄ

Այս սեւաթո՞յր ժապաւէնն:
Ո՛վ կին, յո՛յս տուր, յո՛յս տուր ինծի, ո՛չ թախիծ:

Ե Ի Ա

Նըչանըս է, չեմ կրնար տալ ուրիշ բան:
Կուսաստանի պատերուն մէջ յոյս չ'աճիր:

ԱԴԱՄ

Բայց ո՛չ ալ սէր: Եւ հոն ուր որ դուռն կ'ապրիս՝
Սէրը Ի՞նչպէս չընակի, ո՛վ աղջիկ:
Կը տեսնուի տարադէզ, դեռ կուսան չես:

ᑲ ᑲ ᑭ

Իսաւրա է : Քո՞ւկդ, ասպէ՛տ, զի՛ աղօթքն
Յարմարադռնն է՝ յիսնական կուսանին :

ԱԴԱՄ

Եւ Տանկըբեդն Էմ :

U. I. U.

Տանկրե՛դ, Աստուած հետդ ըլլա՛յ:

ԱԳԱՐ

Իտաւբաւ՝, ո՛հ, մի՛ թողուր զիս այսքան չուտ,
Ապա թէ ոչ պիտի անիծեմ այդ անունն՝
Զոր հնչեցիր առջի անգամ զատուելով:
Երազի պէս, ո՛հ, չատ կարճ է այս բոպէն.
Ի՞նչպէս պիտի շարունակեմ, քանի զուռն
Ինձ առեղծուած պիտի մընտն առ յաւէտ.
Եւ անկարող պիտի ըլլամ զայն զարդարեւ
Ճակատարող ոսկի թէյով թանկագին:

U U U

Վէպը կեանքիս լրանի՛, ահա՛: Հայրըս ալ
Ասպետ էր սուրբ գերեզմանին, գիշեր մ'երբ
Վայրազ ոտին անահկնկալ իր վըրայ
Յարձակեցաւ հըրով-սըրով, դռաւով՝
Փրկութեան յոյս ա'լ չըմբնաց, հայրըս երբ
Սուրբ ուխտ ըրաւ Աստուածամօր, որ անոր
Պիտի ձօնէր զիս տակաւին Երախայ:
Վերստգրածաւ, եւ իր ուխտին կատարման
Հաղորդուեցայ:

ԱԴԱՄ

ՈՐՎ ՍՐՐՈՆՀԻ, ԷՆ ԿՈ՛ՅԱ ՄԱՅՐ,
ԴՈՒ մարմնացած աննարատ սէր, այլ ուխտէն
Արդեօք երես չզարձուցի՞ր Վիրապէն
Որ մեղքի զրոյժ կը խարանչն սրբութեանդ,
Անէճընեբոս փոխելով շնորհն երկնքի... :

ՀԵՂԻՆԷ

Զե՞ս փափաքիր կեանքըս դուն ալ իմանալ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Արդէն զիտեմ. սիրեցիր եւ խաբուեցար,
 եւ սիրեցիր նորէն, բայց դուն խաբեցիր:
 Սէր մը դարձեալ. — բայց ասպետէդ ձանձրացար,
 Սիրտդ դատարկ նոր բընակիչ կը սպասէ:

ՀԵՂԻՆԷ

Տարօրինակ: Հետը արդեօք դե՞ռ մը կայ:
 Այնքան համեստ սակայն չէի կարծեր քեզ՝
 Որ ներկայիս սիրտըս դատարկ համարիս:

ԱՐՈՒՍԵԱԿ

(Աղամիմ)

Փռւթա՛, Տէ՛ր իմ. դուն չես կրնար հրաժարել.
 Յաղթանակս ես սանձահարել չեմ կրնար:

ԱԴԱՄ

Խօսքերըդ են սրտիս խայթոց, Իսաւրա՛:
 Թոյնը գոնէ մէկ համբոյրով քաղցրացուր:

Ե Ի Ա

Ուխտըս զիտես, ասպետ, եւ դեռ ի՞նչ կ'ուզես:

ԱԴԱՄ

Որ ես սիրեմ քեզ՝ արգելուած չէ՛ դուցէ:

Ե Ի Ա

Երջանի՛ր կ'ես. բայց ես ի՞նչպէս մոռնամ քեզ:
 Տանկրե՛տ, կ'երթամ, ոյժըս պիտի նըլաղի:
 Հետըդ Աստուած: Երկինք պիտի տեսնուինք:

ԱԴԱՄ

Աստուած քեզ հետ: Իսկ ինծի յուն այս օրուան:

(Եւս վաճի կը մտնէ)

ՀԵՂԻՆԷ

(Մեկուսի)

Ա՛խ, վատասիրտ, ամէն բան ե՞ս պիտ' ընեմ :

(Բարձրաձայն)

Պատուհանիս վրան, ծովը չէ՛ր բանալին :

(Եւային կը հետեւի)

ԱԴԱՄ

(Ինքնիքն գալով)

Մենք ալ երթանք :

ԱՐՈՒՍԵԱԿ

Արդէն ուշ է, վերջացաւ :

Սերունդըդ, տե՛ս, ի՛նչ յիմար է. կէնը երբ

Կը նկատէ անասնական ցանկութեան

Գործիք մը լոկ, եւ բերտ ձեռքով կը խլէ

Անոր դէմքէն բեղնափռ լին քերթուածին,

Գեղեցկագոյն ծաղիկներէն իր սիրոյն

Մնալով զուրկ. կամ իբր աստուած զետեղած

Խորանին վրայ, անոր համար կ'արեւնի

Սին պայքարով, մինչ կը թօշնի ամբողջն

Իր համբոյրն ալ : Ինչո՞ւ զանի իբրեւ կին

Զի նկատեր ու չի յարգեր իսկապէս

Շրջանակին եւ կոչման մէջ կնոջական :

(Մինչ այս՝ բոլորովին կը մթննայ, լուսինը կ'ելի : Իսպառ եւ Հեղինէ պատուհանին կը մօտեցան)

Ե Ի Ա

Ի՛նչ ջերմ իղձով կը նայէր ինձ, կը դողար,

Ա՛խ, կը դողար հերոս ասպետն իմ առջեւ :

Բայց կնոջական համեստութիւնս ու հաւատք

Կը հրամայեն, սուրբ զոհ մ' ինչպէս ձենձերել :

ՀԵՂԻՆԷ

Զարմանալի՛, որքան մեր սէրն է յիմար .

Կապը խղէ թէ կարծիքին կանխակալ՝

Կը դիմէ զերդ երէ վայրի հաճոյքին,

Մէկդի նետած պատուի զղացումն երեսէն՝

Կը թաւալի արհամարհուած տիղմին մէջ :

Թէ չըխըղէ, ինքնիր շուքէն կը դողայ,

Հըմայքը մինչ կը թառամի ամլօրէն,
Ուրիշն, ինքզինք հաճողներէն զրկելով:
Ինչո՞ւ միջին ճամբէն չ'երթար, կամ արդեօք
Փոքր արկած եւ կամ աղերս մը թեթեւ
Վնաս մ'ունի՞: Խելքըս ասոր չի հասնիր:
Ձէ՞ որ կինն ալ լոկ հողիով չէ շինուած:

Ե Ի Ա

Դուրս նայէ, դեռ հոս կեցած է, Հեղինէ:
Ի՞նչպէս այսքան դիւրաւ պիտի հեռանար:
Ա՛խ, անգամ մ'ալ ձայնը դոնէ լընէի:

ԱԴԱՄ

(Արուսեակին)

Ակնարկ մը տուր, պատուհանին առջեւ չէ՞.
Աչք մը պիտի չըտա՞ր արդեօք ետեւէս:
Դէմքը քնքուշ, ա՛խ, անգամ մ'ալ տեսնէի: —
Իսաւրա՛, ո՛հ, մի՛ ցաւիր որ դեռ հոս եմ:

Երկուքնուս ալ լաւագոյն՝ հոս չըլլայիր:
Սիրտը փրցուած դարձեալ դիւրաւ կը ձուլուի,
Եւ նորէն ցաւ կը պատճառէ՝ թէ կտրեմք:

ԱԴԱՄ

Ձե՞ս վախնար այս դիշերը լուռ դիտելով,
Որ զերդ հսկայ սիրտ մը սերով կը տրոփէ,
Ուր սիրելի է, ո՛հ, արդիւրած միայն մեզ...:

Ե Ի Ա

Մէջս ալ կ'ապրի սա, զերդ երազ անցաւոր,
Որ երկնքէն ընկերացաւ դուցէ ինձ.
Կը սփռուի երգ մը անոյշ օդին մէջ՝
Եւ կը տեսնեմ հազար ժպտուն պատկերներ
Սաղարդին մէջ, եղբայրական համբոյրով,
Ա՛լ չեն խօսիր մեզի անոնք, ո՛վ Տանկրեդ:

ԱԴԱՄ

Ինչո՞ւ, միթէ պատն այս խարխուլ արդե՞ք մ'է
Ինձ՝ որ այնքան աւար առի թուրքերէն,
Անցնիլ պիտի չկարենա՞մ այս խրամէն:

ԱՐՈՒՍԵԱԿ

*Ո՛չ, վասընդի դարու ոգին կը պահէ,
Եւ ան քեզմէ դորաւոք է:*

ԱԴԱՄ

Ո՞վ կ'ըսէ:

(Հեռուէն խառնկին շողերը կ'երեւին)

ՀԵՐԵՏԻԿՈՍՆԵՐԸ

(Հեռուէն խմբովին կ'երգեն)

*Փրկէ՛ իմ անձս սուրէն, եւ շուներու ձեռքէն՝ միամօրութիւնս:
Փրկէ՛ զիս առիւծի բերնէն, եւ միեղջերուի եղջիւրէն զիս աղատէ՛:
Պիտի հռչակեմ անուշդ եղբայրնեւրու մէջ, եւ ժողովուրդներու
մէջ պիտի օրհնեմ քեզ (Սաղմոս ԻԱ. 21-23):*

Ե Ի Ա

Աստուած, դժա՛հ հոգիներուն մեղաւոր:

ԱԴԱՄ

(Սարսափած ընկրկելով)

Սոսկալի՛ր երգ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Առադաստի ձեր երգն է:

ԱԴԱՄ

*Ինչ ալ ըլլայ՝ ես չեմ վախնար. քեզ համար
Ամէն բանի դէմ ես պիտի խիզախեմ:*

ԿՐՕՆԱՒՈՐՆԵՐԸ

(Հեռուէն խմբովին կ'երգեն)

*Աօթ եւ նախատինք հալուին անոնք որ վրաս կը մեծարանէին:
Յնձան եւ ուրախանան՝ որոնք իմ արդարութիւնս կ'ուզեն:
Եւ միշտ ըսեն. Օրհնեալ է Տէր, որ իր ծառային խաղաղութիւնը
կ'ուզէ (Սաղմոս ԼԴ. 26-28):*

(Վերի երգը սկսելուն, Ադամ, որ մեղաստանին դրան մօտեցած էր, նորէն կը
կենայ. աշտարակին վրայէն բու մը կը ճշայ, օդէն ջատուկներ կը թռչտին,
եւ դրան առջեւ կ'մայրօք մը կը բարձրանայ գետնէն, ու սպառնագին կը կանգնի
Ադամի առջեւ):

Ե Ի Ա

(Պատուհանը ուժգին գոցելով)

Աստուած, օղնէ՛ :

ԿՄԱԽՔ

Հեռո՛ւ օրհնեալ այս սեմէն :

ԱԴԱՄ

Ո՞վ ես, ուրու :

ԿՄԱԽՔ

Ես այն եմ որ պիտ' ըլլամ
Համբոյրներուդ, գլուանքներուդ մէջ բոլոր :

ՋԱՏՈՒԿՆԵՐ

(Քրփջալով)

Դառն պրտուդ քաղցըր ցանքէն,
Օձեր թխտուած աղանիէն :
Ե՛կ, Իսաւրա, քեզ կը կանչենք :

ԱԴԱՄ

Ի՛նչ երեսներ, դո՛ւք փոխուեցաք՝ թէ ինքս ես :
Կը ճանչնայի ձեզ՝ երբ ժպտիտ ունէիք :
Ո՞րն է իրաւ, ո՞րն է երազ, հոս հիմա :
Ձեր գիւթանքէն բազուկս ահա կը թուշնայ :

ԱՐՈՒՍԵԱԿ

Դէպքը ի՛նչ լաւ ընկերութիւն ինձ բերաւ :
Շատոնց է որ կը սպասէի այս բախտին .
Գունդը համեստ ջատուկներու այս սիրուն ,
Որոնք սակայն լրբութեան մէջ կը դիեն
Ջրանոյշներն մերկանդամ . մահն ահարկու ,
Իմ ալեւոր զինակից , որ այս երկրի
Ձաւակներուն կը դարձնէ զոռելի
Պարկէշտութիւնն , պատկերը խիստ խաթարած :
Ողջո՛յն ձեզի : Մե՛ղք որ չունիմ ժամանակ .
Շաղկապիւիով ձեզ հետ զիչերն անցընել :

(Տեսիլները կ'անքրեւութանան)

Սէրըդ, Տանկրեդ, տե՛ս, պատուհանը դոցեց.
 Իսկ կեցած ենք մենք հոս այս պաղ զիշերով:
 Հովը ցուրտ է, լոկ յողացաւ կը շահիս:
 Եթէ յանկարծ Հեղինէն գայ, ի՞նչ ընեմ,
 Սիրարանե՞լ պիտի սկսի սատանան.
 Ան յաւիտեան ծիծաղելի կը դառնայ,
 Մէկդի նետած իշխանութիւնն ինքնակամ:
 Զարմանալի՜. մարդը կուրծքով բոցավառ
 Հետամուտ է անձկոտ՝ սիրոյ ծարաւէն,
 Յաւ հնձելով միայն. իսկ դեմն անըզգայ
 Հաղիւ կրնայ պրծիլ անկէ տտենին:

ԱԴԱՍ

Առաջնորդէ՛, առաջնորդէ՛, Արուսեակ,
 Նոր դուրսթեան: Պայքարելու ես ելայ
 Գաղափարի մը համար սուրբ, եւ դտայ
 Անէծք՝ անձուկ ըմբռնումի մէջ ճղճիմ.
 Մարդ կը դոճեն փառքին համար Աստուծոյ.
 Մարդն էր տըհաս դաղափարին կատարման:
 Իդճս էր հաճո՛յքը դարձընել վսեմադոյն,
 Մեղքի կնիք խրանեցին վայելքին:
 Ասպետական արիւթիւն կանդնեցի,
 Եւ սա մղեց սրտիս մէջ թուր դաւաճան:
 Հեռո՛ւ ասկից, հեռո՛ւ դէպի նոր աշխարհ:
 Ես բաւարար ցոյց տուի թէ ինչ կ'արժեմ,
 Թէ գիտէի պայքարիլ ու հրաժարիլ.
 Կրնամ թողուլ տեղըս առանց ամօթի:
 Այլեւս դիս չողեւորէ՛ ո՛չ մէկ բան,
 Աշխարհը թող ուղածին պէս թաւալի,
 Ա՛լ չեմ շտկեր անիւններն իր խանդարուած,
 Եւ անտարբեր պիտի դիտեմ անկումն իր:
 Ա՛լ յողնեցայ, հիմա հանդէլ կը ցանկամ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Հանդէ՛, ուրեմն: Բայց չեմ կարծեր թէ հողիդ,
 Այդ անհանդիստ ոյժը թողու քեզ հանդէլ:
 Աղա՛մ, Աղա՛մ, եկու՛ր, ինծի հետեւէ:

(Շար. 8)

Հունգար բնագրէն քարգմանեց
 Հ. ԱՆԴՐԵԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ